Արձանագրություն N 6
«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Ա.Բաբաջանյան 4 **«20» «11» 2017թ**
ժ.12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Դ.Մակիչյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Մովսեսյանը,Ա.Եփրեմյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. **<u>Գնանշման հարցման բողոքի վերաբերյալ ՀՀ գնումներիի բողոքարկման խորհրդի կայացրած որոշման մասին</u>**
(**Դ.Մակիչյան**)

Ընդունել ի գիտություն, որ, 10.11.2017թ-ին,ժամը 10:40-ին տեղի է ունեցել ՝«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ.-ին ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված ԳԲԽ-ԱՄ-2017/42 ծածկագրով բողոքի առաջին նիստը ,իսկ 17.11.2017թ-ին,ժամը 10:30-ին վերոնշյալ բողոքի 2-րդ նիստը:

Արդյունքում ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 17.11.2017թ.-ի թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/42 որոշման համաձայն՝«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 06.11.2017թ.-ին ներկայացված բողոքը բավարարվել է և որոշվել է դադարեցնել «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովը որոշեց .

Որոշում թիվ 1.

Հիմք ընդունելով «ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 17.11.2017թ.-ի թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/42 որոշումը՝
- անվավեր ճանաչել «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները և մերժել վերջինիս հայտը, ինչպես նաև հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու պահանջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 2.

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ կետերը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառմանհամարը.
2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>

-Հանձնաժողովը որոշեց «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:30-ին, ք. Երևան, Ա.Բաբաջանյան 4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Դ.Մակիչյան
Անդամներ՝		Է.Մովսեսյան
		Ա.Եփրեմյան
Քարտուղար՝		Հ.Ղազարյան